



Տպագրվում է 1990 թվականից

12 (1411) • 5 ապրիլի 2019 թ. • Գինը՝ 150 դրամ

Շաբաթաթերթ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

Ընդունելություն ռստիկանությունում

Ապրիլի 2-ին ՀՀ ռստիկանության պետ Վալերիյ Օսիպյանն ընդունեց Հայաստանում եմ պատվիրակության ղեկավար, դեսպան Պյոտր Ավիտալսկիին:

Ողջունելով դեսպանին՝ Վալերիյ Օսիպյանը բարձր գնահատեց Հայաստանի եւ եվրամիության սերտ համագործակցությունը եւ ներկայացրեց ռստիկանությունում ընթացող բարեփոխումների մանրամասներ:

Խոսվեց ճանապարհային ռստիկանության բալային համակարգի ներդրման եւ երեւանում նոր ստեղծվելիք շարժական պարեկային ծառայության մասին:

ՀՀ ռստիկանության պետը նշեց, որ այս ուղղությամբ շարունակում են իրականացվել համապատասխան աշ-

խատանքներ՝ արդյունավետ եւ որակյալ ստորաբաժանում ունենալու համար:

Դեսպանը նշեց, որ վերջին շրջանում նկատելի են ռստիկանությունում դրական փոփոխությունները: Դրա շնորհիվ է նաեւ, որ Էսպե մեծացել է հասարակության վստահությունը ռստիկանության հանդեպ:

Կողմերը բնարկեցին փորձի փոխանակման, շարժական պարեկային ծառայության թեմայով եվրոպական երկրների համապատասխան մասնագետների մասնակցությամբ դասընթացներ կազմակերպելու, ստորաբաժանման ծառայողների վերապատրաստման, հանդերձավորման եւ սպառազինության վերաբերյալ հարցեր:

Հանդիպմանը բնարկվեցին փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր եւս:



Պյոտր Ավիտալսկին շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ ողջունեց ռստիկանությունում բարեփոխումներն ու դրանք կյանքի կոչելու համար աջակցություն հայտնեց:

Վեճ՝ մահվան ելքով

Մարտի 30-ին հիվանդանոցից ռստիկանության Կենտրոնական բաժնում հաղորդում ստացվեց, որ «շտապօգնության» խումբը Պարոնյան փողոցից մի տղամարդու տեղափոխելու հիվանդանոց: Նրա մոտ ախտորոշվել էր ալկոհոլային ինտոքսիկացիա: Համաներմամբ ազատ արձակված 33-ամյա Կարեն Ավետիսյանն էր: Նրա մարմնին վնասվածքներ կային:



Կարեն Ավետիսյանը հիվանդանոցում մահացավ: Ռստիկանության Կենտրոնական բաժնի քրեական հետախույզները պարզեցին, որ մահացած տղամարդը հիվանդանոց տեղափոխվելու օրը վիճել էր Երեւանի բնակիչներ Վազգեն Գեորգյանի եւ Արսեն Օհանյանի հետ, որոնք էլ պատճառել էին մարմնական վնասվածքները:

Վազգեն Գեորգյանը եւ Արսեն Օհանյանը հայտնաբերվեցին եւ բերման ենթարկվեցին: Հարուցվել է քրեական գործ:

Յուրացում Ճամբարակում

Ռստիկանության ԿՀՊՊ գլխավոր վարչության ծառայողները, ճամբարակի բաժնի քրեական հետախույզների հետ համատեղ, առանձնապես խոշոր չափերի յուրացման դեպք են բացահայտել:



Օպերատիվ-հետախույզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ բնապահպանության նախարարության «Հայանտառ» պետական ոչ առետրային կազմակերպության ճամբարակի անտառտնտեսության տնօրենը, 2015 թ. հունիսին անտառտնտեսության մասնաճյուղում աշխատանքի է հրամանագրել երկու քաղաքացու: Նրանցից մեկը 2016 թ. սեպտեմբերից մինչեւ 2018 թ. հունիսի ամիսը, մյուսը՝ 2017 թ. հունվարի 1-ից մինչեւ 2019 թ. փետրվար, փաստացի չեն ներկայացել աշխատանքի, իսկ նրանց անվամբ դուրս գրված 3 միլիոն 500 հազար դրամ աշխատավարձերը յուրացվել է:

Հարուցվել է քրեական գործ:

Ավագակությունը բացահայտվեց

Ապրիլի 1-ի լուսադեմին մի տղամարդ մտել էր Կորյունի փողոցի արագ սննդի կետերից մեկն ու դանակի սպառնալիքով փող պահանջել, հետո մի աշխատակցի հրել-զցել էր գետնին, իսկ երբ աշխատակցուհիները դիմադրել էին, փախել էր:



Կատարվածի վերաբերյալ ռստիկանությունում անհազանց չստացվեց, թեւէ կասկածյալին տեսագրել էին թե՛ արագ սննդի կետի, թե՛ հարեւան խանութների տեսախցիկները:

Ապրիլի 2-ին ռստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախույզության բաժնում ստացված տեղեկություններն իրացնելով, քրեական հետախույզները Արմյան քաղաքից, նշված ավագակային հարձակումը կատարելու կասկածանքով, բերման ենթարկեցին նախկինում մի քանի անգամ դատապարտված Կորյուն Մխիթարյանին, որը խստովանեց կատարածը:

Բնությունը շարունակվում է:

Հանցախմբի հետքերով

Ինչպես օրերս ներկայացրել էինք՝ մարտի 27-ին բջջային օպերատորներից մեկին՝ Գորիսի մասնաճյուղից տասնութ բջջային հեռախոս գողանալուց հետո ռստիկանության մի քանի ստորաբաժանումների համատեղ օպերատիվ-հետախույզական ծավալումն միջոցառումների շնորհիվ բացահայտվել էր հանցավոր խումբը:



Ըստ նախնական տվյալների՝ յուրաքանչյուր անգամ, նախքան գողությունը, խումբը գտել էր նույն մակնիշի եւ նույն գույնի ավտոմեքենա, հափշտակել համարանիշերը, տեղադրել իրենց մեքենայի վրա, իսկ գողությունը կատարելուց հետո նետել համարանիշերը, ձեռնոցներն ու դիմակները:

Քննությամբ այս պահի տվյալներով բացահայտվել են եւս մի քանի գողություններ, որոնք կազմակերպել եւ իրականացրել է նշված հանցավոր խումբը:

Մասնավորապես՝ Երիկ Տոնոյանը, Վլադիմիր Սիմոնյանը, Արամ Իսունցը եւ Սուրեն Մուսիյանը տվել են խոստովանական ցուցմունքներ, որ գողություն են արել

Մասիսի բջջային օպերատորներից մեկի սպասարկման կետից: Գողությունից առաջ հափշտակել են նոր խարբերող գյուղի Բաղրամյան փողոցի շենքերից մեկի բակում կայանված «Օպել»-ի համարանիշերը:

Նույն ընկերության Մասիսի մեկ այլ մասնաճյուղից գողացել են քսան տարբեր տեսակի բջջային հեռախոս:

Երկու անգամ տարբեր օրերի գողություն են կատարել նաեւ էջմիածնի նույն ընկերության սպասարկման կետից. գողացել են քսանչորս բջջային հեռախոս: Կրկին երկու անգամ տարբեր օրերի նույն քաղաքի նույն ընկերության մեկ այլ սպասարկման կետից գողացել են քսաներեք բջջային հեռախոս: Քսանհինգ բջջային հեռախոս են գողացել բջջային օպերատորի Արտաշատի սպասարկման կետերից մեկից:

Խումբը գողություններ է արել նաեւ Երեւանում: Ջրվեժի նույն օպերատորի սպասարկման սրահից հափշտակել են հեռախոսի պարագաներ, իսկ Նոր Նորքի 5-րդ զանգվածի էլեկտրոնիկայի խանութից գողացել են հինգ նոթբուք:

Կատարվում է քննություն:

Սպանել էր մորը

Ապրիլի 4-ին, ժամը 20.50-ի սահմաններում, «շտապօգնության» ենթաբաժնից ռստիկանության Նոր Նորքի բաժնի հաղորդեցին, որ կանչով մեկնել են Գայի պողոտայի 1-ին շենքի թիվ 31 բնակարան, որտեղ կնոջ դիակ կա:



Մահացածին արագ արձագանքած ռստիկանության եւ քննչական կոմիտեի ծառայողները պարզեցին, որ 49-ամյա կնոջը դանակահարել են: Բնակարանում հայտնաբերեցին արնաման հետքեր եւ արնաման հետքերով դանակ, որը, նախնական վարկածով, հանցագործության գործիքն էր:

Հարուցվեց քրեական գործ՝ սպանության հատկանիշներով: Սպանվածից բացի, տանը նրա որդիներն էին, որոնցից ավագը չկար: Կինը դանակահարվել էր խոհանոցում: Փոքր որդին հյուրասենյակից լսել էր արդեն դանակահարված մոր ծիչերը: Ձայնի վրա հարեւաններն էին վրա հասել եւ անհազանգել 1-03:

Հետագա միջոցառումներով իրավապահների կասկածները հիմնավորվեցին: Նոր Նորքի ռստիկանները սկսեցին 25-ամյա Հակոբ Խանամիրյանի որոնումները: Ձեռավորվեցին օպերատիվ խմբեր, որոնք «սանրեցին» ողջ վարչական շրջանը: Դեպքից մեկ ժամ էլ չանցած՝ որոնվողը հայտնաբերվեց Դավիթ Մայան փողոցում եւ բերման ենթարկվեց ռստիկանության Նոր Նորքի բաժնի, ապա ներկայացվեց քննչական բաժնի:

Դեպքի հանգամանքները պարզվում են:

Նենգություն



Գումարի չափն աստիճանաբար մեծանում էր, բայց պարտապանը պարտքը վերադարձնելու բայլ անգամ չէր անում: **Էջ 2**

Չիր ուզում սպանել



Մ ա Ր Մ Ն ա կ ա ն վնասվածքներով հիվանդանոց տեղափոխված երիտասարդի կյանքը փրկել չհաջողվեց: **Էջ 6**

Անկանխատեսելի՝ ակնհայտ



Հանցագործությունը փաստ էր, ուստի հոգեբուժական հանձնաժողովը հարկադիր բուժման որոշում կայացրեց: **Էջ 7**

Օպերատիվ

Քրեական օրենսգրքի 110 հոդվածը պատիժ է սահմանում ինքնասպանության հասցնելու համար: Ըստ այդմ՝ սպառնալիքի, դատան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզուլուջամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը պատժվում է առավելագույնը երեք տարի ժամկետով ազատազրկման: Նույն արարքը, որը կատարվել է նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվող անձի նկատմամբ, պատժվում է առավելագույնը հինգ տարի ժամկետով ազատազրկման:

Տավուշի մարզի բնակիչ Սուրեն Պողոսյանին առաջադրված մեղադրանքը քրեական օրենսգրքի 110 հոդվածի հատկանիշներով էր: Նրան հաջողվել էր խույս տալ քրեական պատասխանատվությունից՝ թաքնվելով Ռուսաստանի Դաշնության Պերմ քաղաքում: Նրա նկատմամբ հարուցված քրեական գործի վարույթը կատարվեց: Ձեռնարկված որոնողական միջոցառումների արդյունքում դեպքից վեց տարի անց Սուրեն Պողոսյանը հայտնաբերվեց, տեղափոխվեց Հայաստան և ներկայացվեց վարույթն իրականացնող նախաքննական մարմնին:

...2013 թվականի հունվարի 8-ին Տավուշի մարզում ինքնասպան եղավ մի երիտասարդ կին. պայմանականորեն նրան Մարիամ կոչեցին:

Ոստիկանության Դիլիջանի քննչական բաժանմունքում նախապատրաստված նյութերով հարուցվեց քրեական գործ՝ քրեական օրենսգրքի 110 հոդվածի 2-րդ

մասի (ինքնասպանության հասցնելը, որը կատարվել է հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվող անձի նկատմամբ) և 178 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի (խարդախությունը, որը կատարվել է խոշոր չափերով) հատկանիշներով: 2008 թվականին Մարիամն աշխատանք

Նենգություն



քի ընդունվեց մարզի հաստատություններից մեկում: Հաստատության պետի տեղակալ Սուրեն Պողոսյանը չորս-հինգ տարի իր ֆինանսական խնդիրները լուծելու գործից դարձրեց նրան: Նրա դրամամբ՝ տարբեր անձանցից ու վարկային կազմակերպություններից Մարիամն իր անվամբ փող էր վերցնում՝ տալիս նրան:

Գումարի չափն աստիճանաբար մեծանում էր, պարտքերը՝ շատանում, բայց Սուրեն Պողոսյանը դրանք վերադարձնելու քայլ անգամ չէր անում: Իսկ պարտատերերը փողը պահանջում էին Մարիամից՝ ում պարտքով տվել կամ ում անվամբ ձեռակրել էին վարկը:

Քաղաքացիներ են ապօրինություններ



Ոստիկանության ԿՅԴԴ գլխավոր վարչությունում նախապատրաստված նյութերով փաստական տվյալներ են ձեռք բերվել, որ 2016-2018 թթ., ինչպես միասնական, այնպես էլ առանձին իրավաբանական անձանց կարգավիճակով գործող, շահույթ չհետապնդող, Արմավիրի մարզում գործող ջրօգտագործողների ընկերությունների որոշ տնօրեններ, օգտվելով ջրային կոմիտեի իրավասու աշխատակիցների անբարեխիղճ վերաբերմունքի, ապօրինի ջրամատակարարման և ջրօգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու պարտականությունները ոչ պատշաճ կատարելու արդյունքում ստեղծված հնարավորություններից, ընկերությունների հաշ-

վեկշիռներին մուտքագրվող ֆինանսական միջոցներից առանձնապես խոշոր չափերի գումարներ հափշտակելու դիտավորությամբ խախտել են բաժանորդների հետ կնքված 2016-2018 թթ. ջրամատակարարման ծառայություններ մատուցելու վերաբերյալ պայմանագրերի ելակետային պահանջները և, առանց ջրաչափերի տեղադրման, մատակարարված ջրի ծավալները խորանարդ մետրով գրանցելու փոխարեն հեկտարներով գրանցելով և դրանով իսկ բաժանորդներին փաստացի գրկելով մատակարարված ոռոգելի ջրի ծավալները վերահսկելու հնարավորությունից՝ հավելագրումներ կատարելու եղանակով ուռճացրել են մատուցված ծառայությունների ծավալները և այդ կերպ արհեստականորեն ծանրաբեռնել դեֆիտորական պարտքի հաշվեկշիռը շուրջ 1 միլիարդ դրամով:

Ըստ նախնական տվյալների ջրօգտագործողների նշված արհեստական եղանակով գոյացած պարտքերը մարելու և կարկտահարումների հետևանքով առաջացած վնասները վերականգնելու համար, 2016-2017 թթ. պետական բյուջեից սուբսիդավորված ընկերության հաշվեկշիռին մուտքագրված ֆինանսական միջոցներից առանձնապես խոշոր չափերի գումարներ յուրացնելու իրենց դիտավորությունն ավարտին

Հայտնաբերվեց թմրամիջոց իրացնողը

Ոստիկանության ԿՅԴԴ գլխավոր վարչության թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչության ծառայողները ոստիկանության Երևան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի գործընկերների հետ, թմրամիջոց պահելու և օգտագործելու կասկածանքով, բերման ենթարկեցին Վարդգես Միքայելյանին:



որոնցից մեկում «B 8» գրառմամբ ամբողջական դեղահաբ էր, մյուսում՝ «8» գրառմամբ կես դեղահաբ: Բերման ենթարկվածի հայրնաձով սուբսիդներ էր:

Երևանում ապրող Վարդգես Միքայելյանը ընթերցականների ներկայությամբ խուզարկվեց: Հայտնաբերվեց երկու փաթեթ,

2012 թ. սեպտեմբերին Սուրեն Պողոսյանը համոզել էր Մարիամին, որ նա, կոնկրետ ժամկետում վերադարձնելու պայմանով, երկու միլիոն դրամ խնդրի իր հարեանից: Վստահեցրել էր, որ ճիշտ ժամանակին կտա փողը, և Մարիամը «սեւերես» չի մնա: Գործարար հարեանը Մարիամին չէր մերժել ու պարտքով երկու միլիոն դրամ էր տվել:

Գումարը վերադարձնելու խոստացված ժամկետը, սակայն, վաղուց սպառվել էր: Պարտատերը պահանջում էր փողը, իսկ Սուրեն Պողոսյանն իր հերթին հանգստացնում էր Մարիամին, թե՛ շուտով վարկ կվերցնի՝ պարտքը կտա: Բայց դատարկ խոստումների վերջը չէր երեւում: Ի վերջո, Մարիամը համաքաղաքացուն հայտնում է ճշմարտությունը՝ փողը Սուրենի համար էր վերցրել...

Երբ խաղաթղթերը բացվեցին, Սուրեն Պողոսյանը հրաժարվեց պարտքերից, թե՛ Մարիամին եք տվել, նրանից էլ պահանջեք, ես ոչ մի փողից տեղյակ չեմ: Նաեւ զայրացավ Մարիամի վրա, որ տվել էր իր անունը, սպառնաց՝ եթե շարունակի փողի պահանջները՝ կդիմի ոստիկանություն և կապացուցի, որ բոլոր պարտքերն ու վարկերը Մարիամն է վերցրել, ինքը դրանցից տեղյակ չէ:

Վիճակից ելք չգտնելով՝ Մարիամը դիմեց ծայրահեղ քայլի՝ ինքնասպան եղավ: Իսկ Սուրեն Պողոսյանը հանգիստ խոցով մեկնեց հանրապետությունից՝ բնակություն հաստատելով ՌԴ Պերմի մարզում:

Ինքնասպանության հասցնելու և խարդախության մեղադրանքներով հարուցված քրեական գործի վարույթը վերսկսվել է:

Հասնիկ ՊՈՂՈՍՅԱՆ

հասցնելու նպատակով, դրանք ձեռակրելով են որպես բաժանորդների անվամբ կուտակված պարտքերի մարում և ձեռական պայմանագրեր են կնքել՝ տարբեր ֆիզիկական անձանցից հավելագրված արժեքներով տրանսպորտային միջոցների վարձակալության և տարաբնույթ ծառայությունների ձեռք բերման վերաբերյալ, սակայն իրականում նշված պայմանագրերով նախատեսված ծառայությունները մատուցվել են ոչ ամբողջ ծավալներով կամ ընդհանրապես չեն մատուցվել, իսկ որոշ անձանց, Հայաստանից բացակայելու պայմաններում, կեղծ աշխատանքային պայմանագրեր կազմելու եղանակով, հրամանագրել են որպես ջրաշիններ:

Քննության տվյալ փուլում, նման եղանակով, արդեն իսկ պարզվել է շուրջ 29 միլիոն դրամի հափշտակության փաստը:

Առանձնապես խոշոր չափերով գումարներ յուրացնելու կամ վատնելու, մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ փաստաթղթեր կեղծելու և օգտագործելու, ինչպես և պաշտոնատար անձանց կողմից իրենց ծառայության նկատմամբ անբարեխիղճ վերաբերմունք դրսևորելու և պարտականությունները ոչ պատշաճ կատարելու առերեսույթ հանցագործությունների դեպքերի առթիվ ոստիկանությունում հարուցվել է քրեական գործ, որն ուղարկվել է քննչական կոմիտե:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

Ոստիկանները շարունակեցին օպերատիվ-հետախուզական միջոցառումները՝ պարզելու, թե ումից է Վարդգես Միքայելյանը ձեռք բերել սուբսիդները: Համարել աշխատանքը հենց նույն օրը արդյունք փակեց: Երևանի բնակիչ, 36-ամյա Վազգեն Գեորգյանը հայտնաբերվեց ու, թմրամիջոց իրացնելու կասկածանքով, բերման ենթարկվեց ոստիկանություն:

Վազգեն Գեորգյանը ներկայացվել է նախաքննությունը վարող մարմնին, ապա կալանավորվել ու փեղափոխվել է քրեակապարդական հիմնարկ:

Նախաքննությունը շարունակվում է: Մարզում ՍԻՄՈՆՅԱՆ



Մարտի 27-ին ոստիկանության Արաբկիրի բաժնի ծառայողները կոմիտեի պողոտայից բերման ենթարկեցին Երեւանի բնակիչ Արտակ Նազարյանին: Ըստ բնության ձեռք բերված տվյալների՝ պարզվել է, որ նա Արաբկիր վարչական տարածքի նորակառույց շենքերից մեկի՝ իրեն չափավոր երկեսնակալուց բնակարանը վաճառելու պատրվակով ցանկացել է մի բաղաբացուց խաբեությամբ ստանալ 35 հազար դոլար: Սակայն գործն ավարտին չէր հասցրել իրավապահները կանխել էին:

Ոստիկանները բաժնի իրավիճակի նաեւ այն տղամարդուն, որն արդեն վարկով գումար էր վերցրել ու պատրաստվում էր գնել բնակարանը: Մտքով իսկ չէր անցել, որ խաբեբայի ծուղակն է ընկել:

Կատարվածն ամենից շատ անհանգստացրել էր տան իրական սեփականատիրոջը: Բնակարանը վարձակալական հիմունքներով էր տրված: Կենվորներն էին հայտնել, որ իր բնակարանով հետաքրքրվողներ կան, ինչ-որ մեկն ուզում է վաճառել:

Նարուցվել է քրեական գործ:

Ազատվել ու «արհեստին» էր լծվել



Կենտրոն վարչական տարածքում բնակարանային գողության և գողության փորձի դեպքեր էին կատարվել: Մարտի 11-ին փորձել էին բացել Սայթ-Նովայի պողոտայի շենքերից մեկի բնակարանի դուռը, սակայն ինչ-ինչ հանգամանքներից ելնելով՝ չէր հաջողվել: Մարտի 18-ի երեկոյան Թումանյան փողոցի շենքերից մեկի բնակարանից բջջային հեռախոս էին գողացել:

Երկու դեպքով էլ ոստիկանության կենտրոնական բաժնում օպերատիվ կառավարման կենտրոնից ահազանգեր էին ստացվել: Բացահայտման աշխատանքներին միացել էին նաեւ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախույզները, և հետևողական աշխատանքը դրական արդյունք տվեց:

Մարտի 29-ին Երեւանի Լենինգրադյան փողոցից, գողություն կատարելու կասկածանքով, ոստիկանության կենտրոնական բաժնի բերման ենթարկվեց Երվանդ Քոչարի փողոցի բնակիչ Մխիթար Մ.-ն. նա քրեակատարողական հիմնարկից վերջերս էր համաներմամբ ազատվել:

Նախաքննությունը շարունակվում է: Գոռ ՎԱՆՅԱՆ

«02»-ի օպերատիվ իրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի և նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնական դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Յոթ տարի առաջ երեւանի 26-ամյա բնակիչ Արսեն Շահբազյանին դիտավորությանը կանաչ զրկելու դեպքի առթիվ քրեական գործ էր հարուցվել ոստիկանության Արաբկիրի բնակարանային բաժնում:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական եւ բնակարանային միջոցառումների արդյունքում օրեր անց պարզվել էր, որ հանցագործությունը կատարել է Վաղինակ Դարոյանը: Նրա նկատմամբ խափանման միջոց էր ընտրվել կալանավորումը: Նրան հայտնաբերելու ուղղությամբ հայտարարվել էր հետախուզում:

Նանցագործությունից յոթ տարի անց Վաղինակ Դարոյանը վերադարձավ հայրենիք եւ ինքնակամ ներկայացավ ոստիկանության, որտեղից էլ ներկայացվեց վարույթն իրականացնող մարմնին:

մակեցության կանոններից հեռու, իսկ արդյունքը՝ վիճաբանություն, ծեծկռուտք... Թվում էր մեղավոր-անմեղի կռիվ էր, բայց մեղավոր ու անմեղ չկար. երկու կողմն էլ խոհեմությունից զուրկ, իրար լսել-հասկա-



Ծեծկռուտք՝ մահվան ելքով

նալու անկարող երիտասարդներ էին:

Միջադեպը գուցե այլ ավարտ ունենար, գուցե ողբերգությանը չէզոքափակվեր, եթե «Նիսան»-ի վարորդը օգնական ուժ չկանչեր: Չանգեց հորեղբոր որդուն Վաղինակ Դարոյանը, ու հիսթերիկ ներկայացնելով իրավիճակը՝ կանչեց դեպքի վայր:

Վաղինակ Դարոյանը ընկերոջ հետ էր, երբ հորեղբոր որդուց հեռախոսագանգ ստացավ: Նրա «Մերսեդես»-ով էլ սլացան դեպքի վայր: Կռիվը թե՛սացավ. ով ում ինչպես կարողացավ խփեց: Ծեծկռ-

տուքն ամփոփեց Վաղինակը. դանակով խփեց Արսեն Շահբազյանի կրծքավանդակին, ու հեռացան...

Հաջորդ օրը Վաղինակ Դարոյանը մեկնեց Վրաստան, այնտեղից էլ թուրքիա: Նախաքննական մարմնին տված ցուցմունքում «Տոյոտա»-ի վարորդը, որ նույնպես քրեական գործով տուժող էր անցնում, նշել էր, որ վթարի հետեւանքով «Նիսան»-ին պատճառված վնասի փոխհատուցման չափի շուրջ էր վիճաբանություն սկսվել, հետո «Նիսան»-ի վարորդը ինչ-որ մեկին զանգել ու կանչել էր: Քիչ անց դեպքի վայր եկած «Մերսեդես»-ից իջել էր մի երիտասարդ (Վաղինակ Դարոյանը), խփել էր իրեն ու Արսենին: Ինքը չէր նկատել, թե երբ եւ ով դանակահարեց Արսենին: Հակառակորդ կողմը մեքենաները նստել, հեռացել էին, իսկ ինքը մոտեցել էր գետնատարած Արսենին, որ անգիտակից վիճակում էր: Չանգեց էր «շտապօգնություն»: «Շտապօգնության» բրիգադը Արսեն Շահբազյանին տեղափոխել էր հիվանդանոց, որտեղ նա մահացել էր:

Հարազատների շրջանում տարված բացատրական աշխատանքների արդյունքում դեպքից յոթ տարի անց Վաղինակ Դարոյանը վերադարձավ: Հասկացել էր ծանր հանցանք էր գործել, ու հատուցման ժամը գալու է, որքան էր թաքնվել օտար երկրներում, որքան էլ երկարած գեր անագատության ժամանակը:

Քրեական գործի կասեցված վարույթը վերսկսվել է:

Համիկ ՊՈՂՈՍՅԱՆ



Պարտությունը՝ միտքի ժողովուրդ

Մարտի 25-ին Երեւանի Տրաշեն փողոցի տներից մեկից գողություն էր կատարվել: Հափշտակել էին փող ու բջջային հեռախոսներ: Տասները անմիջապես զանգել էր ոստիկանություն:

Դեպքի առթիվ հարուցվեց քրեական գործ:

Ոստիկանության Էրեբունու բաժնի ծառայողները ձեռնարկեցին անհետաձգելի միջոցառումներ՝ բնակարանային գողությունը բացահայտելու ուղղությամբ: Առաջ ընթացին մի շարք վարկածներ: Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ ստացվեցին նաեւ օպերատիվ տեղեկություններ:

Դեպքի հաջորդ օրը Էրեբունու քրեական հետախույզները, գողությունը կատարելու կասկածանքով, բերման ենթարկեցին 27-ամյա Վիրաբ Գալստյանին եւ 26-ամյա Էդգար Թադեւոսյանին:

Նրանք խոստովանեցին կատարածը: Ըստ Վիրաբ Գալստյանի հայտարարության՝ գողոնը Երեւանում վաճառել էին անձանոթների:

Քննությունը շարունակվում է:

Ն. Ա.

Կամուփի հրաժարում

Ոստիկանության տարածքային ստորաբաժանումների ծառայողները շարունակում են ապօրինի պահվող զենք-զինամթերքի հայտնաբերման ուղղությամբ ամենօրյա հետեւողական պայքարը՝ շեշտը դնելով հատկապես բացատրական աշխատանքի վրա:

Մարտի 24-ին ոստիկանության Ամասիայի բաժնի եկած 26-ամյա աղջիկը բերել էր ինքնաշեն ինքնաձիգ՝ պահուսակով, եւ ինքնաձիգի փամփուշտներ: Նրա հայտնաձուլված զենք-զինամթերքը գտել էր Ամասիա գյուղի իրենց շինությունը մաքրելիս: Դրանք պատկանել են Արցախյան ազատամարտի մասնակցած հորը, որը վեց տարի առաջ մահացել էր: Ոստիկանության Անի բաժնի ներկայացած 35-ամյա տղամարդն էլ, որ Մարալիկ բաղաբի բնակիչ է, ոստիկաններին հանձնեց «Կարաբին» տեսակի ակոսափող հրազեն եւ փամփուշտներ:



Ըստ նրա՝ զենք-զինամթերքը պատկանել է Արցախյան ազատամարտի մասնակցած հանգուցյալ եղբորը:

Ոստիկանության Արցախյան բաժնում նույնպես արձանագրվեց ապօրինի պահվող զենք-զինամթերքի կամավոր հանձնման դեպք: Քեթի գյուղի մի բնակիչ գտմը մաքրելիս «Կալաշնիկով» ինքնաձիգ էր գտել ու բերել բաժնի: Նրա հայտնաձուլված

այն պատկանել է Արցախյան ազատամարտի մասնակցած հանգուցյալ ամուսնուն:

Ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության Արտաշատի պահպանության բաժնի ծառայողների բացատրական աշխատանքի շնորհիվ նույնպես ապօրինի պահվող զենք-զինամթերք է հանձնվել: Ոստիկանության Արտաշատի բաժնի ներկայացած 38-ամյա տղամարդը կամավոր հանձնել է «Կալաշնիկով» ինքնաձիգ, հրացան, փամփուշտներ, զրահաբաճկոն եւ այլ ռազմամթերք: Նրա հայտնաձուլված զենք-զինամթերքը պատկանել է տարիներ առաջ մահացած հորը, որը մասնակցել է Արցախյան ազատամարտին:

Ոստիկանությունը շարունակում է բնակչության շրջանում տարվող բացատրական աշխատանքը՝ հիշեցնելով, որ ապօրինի պահվող զենք-զինամթերքը կամավոր հանձնողն ազատվում է քրեական պատասխանատվությունից:

Ս. Ա.

Մորթված ձիեր՝ անասնագոմում



Օրերս ոստիկանության Արարատյան փողոցի քրեական հետախույզները օպերատիվ փնտրելու սկսեցին, որ Արարատի մարզի Մրգանուշ գյուղի բնակիչներից մեկի ձիերը գողացել ու մորթել են: Ոստիկանների փնտրություններով հանցագործությունը կատարել էր վերջերս համաներմամբ ազատ արձակված 37-ամյա Կամո Մինասյանը, որը Ներքին Դժին գյուղի բնակիչ է: Կենդանիներին, ի դեպ, դրանցից մեկը ձագով էր, Կամո Մինասյանը փարել էր Մրգանուշ գյուղում ապրող մորեղբոր՝ 47-ամյա Լյուսյա Խաչատրյանի գոմ: Կամո Մինասյանը, Լյուսյա Խաչատրյանը ու 40-ամյա Կարեն Խաչատրյանը ձիերը մորթել են, բայց չեն հասցրել իրացնել: Ոստիկանության Արարատյան փողոցի քրեական հետախույզները կատարվածի մասին փնտրականապես շտապել էին Մրգանուշ: Ձիերը մորթած փղամարդիկ էլ փախել էին:

Բացառական աշխատանքի արդյունքում երեքն էլ ներկայացան ոստիկանության Արարատյան փողոցի բաժնի:

Դեպքի հանգամանքներն ու յուրաքանչյուրի դերակատարումը քննությանը պարզվում է:

Մարտին ՄԻՄՈՆՅԱՆ

Ոստիկանները հանցախումբ են բռնել

Մարտի 27-ին, կեսգիշերն անց, ոստիկանության Գորիսի բաժնում հաղորդում ստացվեց, որ բջջային օպերատորներից մեկի Գորիսի մասնաճյուղից գողություն է կատարվել:

Ոստիկանության օպերատիվ խումբը դեպքի վայրում պարզեց, որ մարտի 26-ին, ժամը 23.50-ի սահմաններում, հարմարեցված գործիքով բացելով դուռը՝ մտել էին Գուսան Աշոտի փողոցի մասնաճյուղ եւ գողացել տասնութ բջջային հեռախոս՝ պատճառելով 1 միլիոն 486 հազար դրամի վնաս:

Հարուցվեց քրեական գործ: Ոստիկանության քրեական հետախույզության գլխավոր, Սյունիքի մարզային վարչությունների, Գորիսի եւ Վայքի բաժնիների ծառայողների ձեռնարկած ծավալուն միջոցառումների արդյունքում հանցագործությունը բացահայտվեց:

Պարզվեց, որ գողությունը հնարավոր է կատարած լինեն երեւանցիներ Էրիկ Տոնոյանը, Էդգար Սարգսյանը, Վլադիմիր Սի-



մոնյանը, Արամ Իսուկը եւ Սուրեն Մուսիսյանը: Նրանք, գողությունը կատարելու կասկածանքով, բերման ենթարկվեցին ոստիկանության Գորիսի բաժնի:

Պարզվեց նաեւ, որ գողությունը կատարելուց հետո փախել էին Սուրեն Մուսիսյանի «Օպել»-ով: Մեքենան տեղափոխվեց պահպանվող հատուկ տարածք:

Կասկածյալները խոստովանել են, որ գողություններ են արել նաեւ Վաղարշապատի, Մասիսի եւ Արտաշատի նույն բջջային օպերատորի սպասարկման կենտրոններից: Մասնավորապես. 2019 թ. մարտի կես-

րին Վաղարշապատի սպասարկման կենտրոնից գողացել են տասնութ հեռախոս եւ հաջորդ օրը վաճառել 280 հազար դրամով: Դրանից հետո գողություն են արել Մասիսի եւ Արտաշատի սպասարկման կենտրոններից, իսկ գողացված հեռախոսները Երեւանում 800 հազար դրամով վաճառել Վրաստանի մի քաղաքացու: Փողը ծախսելուց հետո կրկին գնացել են Վաղարշապատ եւ նույն խանութից գողացել հեռախոսներ, որոնք դարձյալ վաճառել են նույն անձին: Ընդ որում՝ յուրաքանչյուր անգամ գտել էին նույն մակնիշի եւ նույն գույնի ավտոմեքենա, հափշտակել համարանիշերը, տեղադրել իրենց մեքենայի վրա, իսկ գողությունը կատարելուց հետո նստել էին համարանիշերը, ձեռնոցներն ու դիմակները:

Ձեռնարկվում են միջոցառումներ դեպքերի բոլոր հանգամանքները եւ յուրաքանչյուրի դերակատարումը պարզելու ուղղությամբ:

Քննությունը շարունակվում է:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնական դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Օպերատիվ

Գողություն փնտրություն

Գողություն կատարելու կասկածանքով ոստիկանության Բագուվի բաժին բերման ենթարկվեց Վանաձոր քաղաքի բնակիչ Կարեն Նարույանը:

Կարենը ֆինանսական խնդիրներ ուներ: 2018-ի դեկտեմբերի կեսերին գումար վաստակելու խնդրով մտահոգ անցնում էր «Լճեր»-ի մոտով: Փայտամշակման արհեստանոցի մոտ ոտքը կախ գցեց. բակում մետաղյա սայլակ էր նկատել: Որոշեց գողանալ:

Ավարով ճանապարհը շարունակեց եւ քիչ անց երկրորդ գողությունը «հեղինակեց»: Կիսակառույց շինության բակից գողացավ վեց մետաղյա ամրան:



Նաջորդ օրը ամրանները վաճառեց մետաղի ընդունման կետում, իսկ սայլակը պահ տվեց անձանոթ մեկին՝ մի բանի օրից վերցնելու խոստումով:

Կարեն Նարույանյանի արարքում առկա էր բրեական օրենսգրքի 177 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցարարք, սակայն դիմողի բողոքի բացակայության հի-

բով գործի հարուցումը մերժվել է: Թվում էր, թե Կարենը կատարվածից դասեր պիտի բաղի, այնինչ՝ միայն թվում էր: Փետրվարի 4-ին, գողություն կատարելու կասկածանքով, կրկին հանգրվանեց ոստիկանության Բագուվի բաժնում:

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվեցին հերթական արարքի մանրամասները:

Կարենը որոշեց ավտոտնակներից մեկի հարեւանությամբ դարսված շրսմետրանոց մի բանի տախտակ գողանալ եւ 1000 դրամ պարտքի դիմաց տալ ծանոթին: Այդպես էլ արեց: Յոթ տախտակ պարտապանին տվեց եւ ասաց, թե աղբանոցից է գտել:

Այս դեպքում եւս դիմողի բողոքի բացակայությամբ բրեական գործի հարուցումը մերժվել է:

Վանաձորի Հովհաննես Սիմոնյանը խոստովանական բացատրություն տվեց:

Վարուժանի հետ հարաբերությունները լարված էին: Այդ օրը նրանց շենքի բակով անցնելիս նկատել էր նրա մեքենան եւ որոշել վնասել: Փայտով կտորել էր հողմապակիները՝ պատճառելով 40 հազար դրամի նյութական վնաս:

Հովհաննես Սիմոնյանի արարքում առկա էր քրեական օրենսգրքի 185 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցարարք, սակայն դիմողի բողոքի բացակայությամբ քրեական գործի հարուցումը մերժվել է:

Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ



Վնասարարը

Վանաձոր քաղաքի բնակիչ Վարուժան Նահապետյանը փորձեց բակում կայանած իր մեքենայի շարժիչ գործի գցել, բայց չհաջողվեց: Մի քանի ապարդյուն փորձերից հետո մեքենայի դռները փակեց եւ գնաց իր գործերով: Երեկոյան Վարուժանի կինը՝ Նարինեն, նկատեց,

որ մեքենայի հողմապակիները կտրված են: Չանգով ամուսնու տեղեկացրեց այդ մասին: Վարուժան անմիջապես շտապեց մեքենայի մոտ: Կարծեց, թե մեքենայից գողություն է կատարվել, սակայն ամեն ինչ տեղում էր, միայն ապակիներն էին կտրված:

Կատարվածի մասին տեղեկացան ոստիկանության Բագուվի բաժնի աշխատակիցները: Նյութերի նախապատրաստման ընթացքում իրավապահները ձեռնարկեցին համապատասխան միջոցառումներ՝ պարզելու վնասարարի ինքնությունը: Պարզեցին:

Սիդաբը՝ նախորդ համարում

Քրեական գործի վարման ընթացքում հարցաքննության ենթարկվող մարդկանց կողմից հանգամանքների աղավաղումը իրականացվում է հետևյալ հնարքների օգնությամբ՝

ա) նկարագրվող իրադարձության, գործողությունների (ինչպես տվյալ մարդու, այնպես էլ այլ գործող անձանց) վերաբերյալ առանձին տարրերի թաքցնելը, բացառելը, լուրջան մատնելը, բ) նկարագրության

լրացում մտացածին մանրամասներով եւ տարրերով, որոնց միջոցով իրադարձությունը ստանում է այլ բնույթ,

գ) նկարագրության մեջ իրադարձության առանձին հատվածների վերաբաշխում եւ տեղաշարժում ըստ տեղի, ժամանակի, հաջորդականության, փոխկապվածության եւ այլն,

դ) իրադարձության առանձին հատվածների փոխարինում մտացածին հանգամանքներով եւ մանրամասներով:

Իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից ստի պատրուշման մեթոդներին տիրապետելը նպաստավոր գործունեություն ծավալելու կարելու նախապայման է՝ ուղղված հանցագործությունների բացահայտմանն ու հետաքննության կատարմանը:

Հաճախ կարելի է նկատել մարդու խոսքի եւ դիմախաղի, ժեստերի, դիրքի եւ մարմնի շարժումների միջոցով անհամապատասխանություն: Ավելին, հոգեբանության մեջ մարդու վարքի հետեւելու ընթացքում առանձնացվել են, այսպես կոչված, կեղծավորության ժեստեր՝ ձեռքով բերանը փակելը, քթին դիպելը եւ այլն:

Ինֆորմացիայի ճշմարտացիության բացահայտման կարելու նախապայմաններից է խոսքային եւ ոչ խոսքային հաղորդակցման միջոցով հա-

մապատասխանության եւ անհամապատասխանության բացահայտումը: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մարդու հայացքին: Հայտնի է, որ նորմալ շփման ընթացքում հայացքները հանդիպում են ժամանակի 2/3-րդում, իսկ կեղծ հարաբերությունների ժամանակ այդ թիվը հասնում է 1/3-րդի: Ա ռ ա մ ձ -

Ասի հոգեբանությունը



նացնենք մի շարք ոչ խոսքային հակազդումներ, որոնք վկայում են կեղծավորության մասին:

1. Ձեռքով փակում է բերանը, բութ մատը հաված է այտին: 2. Հայուն քթին, քթեւի հայուն քթի տակի փոսիկին կամ արագ հպում: 3. Կոպերը տրորելը: 4. Ականջը տրորելը կամ քորելը: 5. Օձիքը ձգելը: 6. Մազերը հաճախակի շոյելը: 7. Թեթեւ ներդաշնու ժպիտը, որը հաճախ ուղեկցվում է սուտ արտահայտություններով: 8. Վարքագծի նյարդայնությունը, որը կարող է արտահայտվել պարբերաբար ծիսելով, կոկորդը մաքրելով, հազալով: 9. Աթոռի վրա անհանգիստ շուռումուռ գալը, փախչող հայացքը: 10. Խոսքի տեմպի եւ ինտոնացիայի հանկարծակի փոփոխությունը: 11. Աչքերի նեղացումը հարցերին պատասխանելիս: 12. Վեգետատիվ հակազդումները, դեմքի շառագունելը,

չնչառության արագացումը, բիբերի լայնացումը, բարձր քրտնարտադրությունը եւ այլն:

Սուտ ասող մարդու ոչ վերբալ վարքը կարող է արտահայտվել նաեւ նրա արարքներում եւ գործողություններում (կոնկրետ մարդկանց հանդիպելուց խուսա տալը, որոշակի վայրեր հաճախելու կամ չհաճախելու ցանկությունը եւ այլն): Հիշյալ բոլոր հակազդումների իրական բովանդակությունը եւ նշանակությունը կարելի է հասկանալ միայն տվյալ մարդու անձի համալիր վերլուծության ժամանակ:

Ամերիկացի գիտնական Պոլ Էքմանը «Ստի հոգեբանությունը» գրքում գրում է. «Սուտն այնքան բնական է, որ այն կարելի է վերագրել մարդկային գործունեության բոլոր ոլորտներին»: Ոմանք կարող են չընդունել նման հայտարարությունը՝ համարելով, որ սուտն արժանի է համընդհանուր պատասխանի: Սակայն մի պահ պատկերացնենք աշխարհը, որտեղ բոլորն ամխտիր բացարձակ անկեղծ լինեին միմյանց հետ՝ հաշվի չառնելով հանգամանքները եւ իրավիճակները: Օրինակ, եթե բժիշկն այցելուին ասեր, որ ավելորդ դրամ չվատնի դեղորայքի համար, քանի որ նրա հիվանդությունը անբուժելի է, կամ աշխատանքի ընդունվող մարդն անմիջապես խոստովաներ, որ չի սիրում կարգ ու կանոն, կամ էլ հանդիպելիս ընկերը հայտնեղ ընկերոջը, որ նա չափազանց հոգնած է հիվանդ տեսք ունի...

Այսպիսի օրինակները կարելի է անվերջ շարունակել: Խոստովանենք, որ այդպիսի աշխարհը չէր կարողանա գոյատևել տեւական ժամանակ: Ուստի մեր կյանքից սուտն արմատախիլ անելու բոլոր փորձերը ուտոպիական, հոգեբանորեն սխալ եւ հետեւաբար անհեռանկարային են:

Պատրաստեց Տաթև ՄեծՈՒՆՅԸ

Չվարձալի ամփոփագիր

Եղբորդու կինը

44-ամյա մի կին հաղորդում է տվել, որ իր հետ համատեղ ապրող եղբորդու կինը կենցաղային հարցերի շուրջ վիճաբանել է իր հետ եւ այդ ընթացքում եռացրած ջրով թեյամանը նետել է իր վրա: Թեյամանը դիպել է գլխին, իսկ եռման ջուրը թափվել է ձեռքին՝ պատճառելով վնասվածք:



Տրանս...

Ոստիկանություն է զանգել 36-ամյա մի տղամարդ եւ հայտնել, որ հեռախոսով պայմանավորվել է կին ներկայացած մարմնավաճառի հետ, սակայն նրա բնակարանում, հինգ հազար դրամ տալուց հետո, պարզել է, որ նա տրանսսեքսուալ է: Տղամարդը փողը հետ է պահանջել, եւ այս հարցի շուրջ վիճաբանության ժամանակ, երբ տրանսսեքսուալն իրեն բնակարանից դուրս է հրել, ձեռքը մնացել է դռան տակ: Տղամարդը ստացել է վնասվածք, իսկ փողն այդպես էլ հետ չի ստացել:

Աղոթելու համար

Հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ «կրծքավանդակի սալջարդ» ախտորոշմամբ բուժօգնության է դիմել 42-ամյա մի կին: Նա հայտնել է, որ երկու օր առաջ ամուսինն է խփել իրեն:

Ոստիկաններին կինը հայտնել է, որ ամուսինն իր հետ վիճել է տանը աղոթելու համար:

Ամուսինը հրավիրվել է բաժին, սովել բացատրություն եւ բաց թողնվել:

Կինը հրաժարվել է կտրոն-ծանուցագիր ստանալուց եւ շարունակել է աղոթել:

Ատամագողություն

Գողություն կատարելու կասկածանքով իրավապահները ոստիկանություն են հրավիրել 30-ամյա մի կնոջ: Նա խոստովանել է, որ օրեր առաջ, հյուրընկալվելով միայնակ բնակվող

57-ամյա ծանոթին, առանձնատան հյուրասենյակի սեղանից գողացել է նրա արհեստական ատամնաշարը՝ պատճառելով 50 հազար դրամի վնաս:

Իրավապահները փորձում են հասկանալ գողության իմաստը:

«Ներընտանեկան»

Հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ դաստակների վնասվածքներով իրենց մոտ է տեղափոխվել 82-ամյա մի տղամարդ:

Ոստիկաններին նա հայտնել է, որ վիճաբանության ժամանակ 52-ամյա կինը, 16-ամյա դուստրն ու նրա 27-ամյա ընկերն են ծեծել իրեն:

Ձեռնարկվում են միջոցառումներ տարիքային անհամապատասխանությունները պարզելու ուղղությամբ:

Տղամարդու գործ

46-ամյա մի կին հաղորդում է տվել, որ նախկին ամուսինը իր մոտ եղած բանալիով բացել է ավտոտնակի դուռը եւ գողացել անհղալը:

Խորոզված անելն, այնուամենայնիվ, տղամարդու գործ է:

www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի մարտի 28-ից ապրիլի 4-ն ընկած ժամանակահատվածում ձեռնարկված օպերատիվ-փնտրողական եւ բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 28 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 1-ը հետախուզվում էր ծեծի, 1-ը՝ ծեծի եւ կողոպուտի, 2-ը՝ մարդու թրաֆիքինգի կամ շահագործման, 1-ը՝ ծնողի կողմից երեխային պահելուց չարամտորեն խուսափելու, 1-ը՝ կողոպուտի եւ գողության, 1-ը՝ կողոպուտի փորձի եւ գողության փորձի, 2-ը՝ գողության, 4-ը՝ խարդախության, 2-ը՝ յուրացնելու կամ վատնելու, 1-ը՝ գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու, 1-ը՝ սնանկության ընթացքում անօրինակ գործողությունների, 1-ը՝ առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության, 1-ը՝ պետական սահմանն ապօրինի հատելու, 1-ը՝ հրամանը չկատարելու, պետի նկատմամբ բռնի գործողություններ կատարելու կամ դրանք կատարելու սպառնալիքի եւ նրանց միջոցով ստորադասության (ենթակայության) հարաբերությունների բացակայության դեպքում զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները խախտելու համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 2 հետախուզվող:

Արձանագրվել է 76 ճանապարհատրանսպորտային պատահար. 2 մարդ զոհվել է, 113-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Արձանագրվել է վրաբերի 22 դեպք. 1 մարդ զոհվել է, իսկ 21-ը ստացել են մարմնական վնասվածքներ:

«02»-ի օպերատիվ իրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնական դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Հանրապետության ճանապարհներին

Ապրիլի 1-ին «Նիսան» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Հալաբյան փողոցում վրաերթի է ենթարկել 25-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Ապրիլի 1-ին Երեւանի Արշակունյաց պողոտայում իրար են բախվել «ԲՄՎ» եւ «Նիսան» մակնիշի ավտոմեքենաներ. «Նիսան»-ի 35-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով բուժօգնության է տեղափոխվել հիվանդանոց:

Ապրիլի 1-ին «Ֆորդ» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Կոմիտասի պողոտայում վրաերթի է ենթարկել 31-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Ապրիլի 1-ին «Ֆոլքսվագեն» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Բաբաջանյան փողոցում վրաերթի է ենթարկել 32-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Ապրիլի 1-ին «Ջիպ Գրանդ Չերոկի» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Էջմիածին քաղաքի Մաշտոց-Վ. Կոստանյան փողոցների խաչմերուկում վրաերթի է ենթարկել 65-ամյա քաղաքացու եւ իր մեքենայով տեղափոխել հիվանդանոց:

Ապրիլի 1-ին «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենան Երեւան-Սեւան ճանապարհի 20-րդ կմ-ին դուրս է եկել երթուղուց դուրս, բախվել բետոնե պատնեշներին եւ գլորվել ծորը. 33-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Ապրիլի 1-ին «ՈւԱԶ» մակնիշի ավտոմեքենան Սիսիան-Դաստակերտ ճանապարհի 1-ին կմ-ին դուրս եկել երթուղուց դուրս, բախվել հողաքմբին եւ կողաշրջվել. 15-ամյա ուղևորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Ապրիլի 2-ին Երեւանի Արմենակյան փողոցում իրար են բախվել երկու «Օպել» մակնիշի ավտոմեքենաներ. վարորդներից մեկը եւ երկու ուղևորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

Ապրիլի 2-ին «ԿԻԱ» մակնիշի ավտոմեքենան բախվել է Երեւանի Ներքին Շենգավիթի 9-րդ փողոցի տներից մեկի պատին: Պատն ու տանիքը փլուզվել են, իսկ տանը գտնվող երեխաները՝ 7-ամյա տղան եւ 3-ամյա աղջիկը, մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

Ապրիլի 2-ին «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Կոմիտասի պողոտայում վրաերթի է ենթարկել 52-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Ապրիլի 2-ին «Դեու» մակնիշի ավտոմեքենան Երեւան-Իջեւան ճանապարհի 52-րդ կմ-ին բախվել է կամրջի բետոնե պատնեշին. 29-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Ապրիլի 2-ին «Մերսեդես Բենց» մակնիշի ավտոմեքենան Սյունիքի մարզի Շինուհայր գյուղում դուրս է եկել երթուղուց դուրս եւ կողաշրջվել. 30-ամյա ուղևորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Ապրիլի 2-ին «Նիսան Իքս-Թրաիլ» մակնիշի ավտոմեքենան Մեղրի քաղաքի Աղեյան եւ Ջորավար Անդրանիկի փողոցների խաչմերուկում բախվել է «ՎԱԶ-21074» մակնիշի ավտոմեքենայի. «ՎԱԶ-21074»-ի 53-ամյա վարորդը տեղափոխվել է հիվանդանոց:

Ապրիլի 3-ին «Օպել» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Իսակովի պողոտայում վրաերթի է ենթարկել 34-ամյա տղամարդու, որը տեղում մահացել է: Վարորդը բուժօգնության է դիմել հիվանդանոց:

Աշխարհի համարյա բոլոր ժողովուրդների լեզուներում եւ ավանդապատումներում գոյություն ունի համաշխարհային ջրհեղեղի առասպելը: Այդ հինգ հարյուրից ավելի պատումները ապշեցուցիչ կերպով նման են իրար եւ ունեն միեւնույն սյուժեն՝ մարդկությունը կործանվում է ջրհեղեղից, փրկվում է միայն մի մարդ՝ իր ընտանիքով: Արեւմտյան երկրներում այդ մարդը հայտնի է Նոյ անունով, արեւելքում նրան կոչում են Նենե, Մերձավոր Արեւելքում նրա անունը Աբրահամ է, Ռուսաստանում կամ Բիուսուրդա: Նմանություններ ունեն նաեւ «Նոյերի» փրկարար նավերը: Աստվածաշնչում այն կոչվում է տապան, նույնն է թե՛ նավ, Միջագետքի պատումներում ստորջրյա նավ է՝ սուզանավ, իսկ արեւելքի լեզուներում խոսքը ներփորված գերանի մասին է:

Միջագետքի լեզուները ջրհեղեղի մասին բազում աղերսներ ունի Նոյի ջրհեղեղի հանրահայտ աստվածաշնչյան պատմության հետ: Որոշ տարբերություններով բոլոր տարբերակներում խոսվում է գոբալ աղետի մասին, որին զոհ է դառնում ողջ մարդկությունը:

Նոյնպես աստիճանաբար զիջում են Մեծ ջրհեղեղի եւ մեկ վարկած: Մանուս այստեղ հին հնդկական Նոյն է, որին օգնել է փրկվելու ջհանջա ծուկը (ծկան մեջ մարմնավորվել է աշխարհի արարիչ Բրահման, այլ վարկածներով՝ աշխարհի պահապան Վիշնուն):

Նոյնպես աստիճանաբար զիջում են Մեծ ջրհեղեղի մասին եւ նրան ուղարկում մի մեծ նավ՝ պատվիրելով այնտեղ տեղավորել մեկական զոյգ բոլոր կենդանիներից եւ բոլոր բույսերի սերմերը:

Նույնպես տարբերակում մարդկանց ոչնչացում է Ջեւա՛ր՝ աստվածների արքան: Վրեժխնդիր աստվածությունը երկիրը մաքրելու համար գործի է դնում ջրհեղեղը, որի ընթացքում զոհվում է ողջ մարդկությունը, բացի մի քանիսից,



որոնց հաջողվում է փրկվել ու ելնել ամենաբարձր լեռների կատարները:

Լսոսում եւ Նյուսիային Թաիլանդում շրջանառվող ջրհեղեղի առասպելներում խոսվում է այն մասին, որ շատ դարեր առաջ վերին արքայությունում ապրում էին սովորաբար արարածներ: Մի անգամ սովորները հայտարարում են, թե մարդիկ իրենց հետ պիտի կիսեն ուտելիքը: Մարդիկ հրաժարվում են, եւ մոլեզված սովորները ջրհեղեղ են անում, որն էլ ամայացնում է երկիրը:

Կան ճապոնական ավանդապատումներ, համաձայն որոնց՝ Օվկիանիայի կղզիները հայտնվել են, երբ աշխարհը ոչնչացրել է ջրհեղեղը, պապ վերստեղծվել է Թանգալոա աստծո կողմից: Սամոացի-

ները նույնպես հավատում են ջրհեղեղին, որը ժամանակին երկրի երեսից ջնջել է ողջ մարդկությունը: Մեքսիկական առասպելներում ավերածությունները ի հայտ են գալիս հորդառատ անձրեւի ու ջրհեղեղի հետեւանքով, լեռներն անհետանում են, իսկ մարդիկ՝ վերածվում ձկների:

Էկվադորում կանարների ցեղը մի հնագույն ավանդազրույց է պահպանում, համաձայն որի՝ մահաբեր ջրհեղեղից փրկվում են միայն երկու եղբայր, որոնք բարձրանում են լեռան գագաթը:

Անկասմարկա գավառի հնդկացիները պատմում են հետեւյալը. ջրհեղեղից մի ամիս առաջ նրանց ոչնչությունը ասես խելագարված լինեին՝ ցերեկը ոչինչ չէին ուտում, իսկ գիշերները հետեւում էին աստղերին: Ի վերջո, հովիվը հարցնում է, թե ինչ է պատահել, ու կենդանիները պատասխանում են, որ աստղերը աշխարհի կործանում են կանխագուշակում ջրից: Լսելով՝ հովիվը խորհրդի է նստում իր վեց երեխաների հետ, եւ որոշում է իրենց հետ որքան հնարավոր է շատ ուտելիք ու անասուն վերցնել ու ելնել ամենաբարձր՝ Անկասմարկա լեռան գագաթը: Ըստ պատմի՝ ջրերի բարձրանալու հետ լեռն ավելի ու ավելի էր բարձրանում, այնպես որ, ջրերը գագաթին չի հասնում, իսկ ջրերի իջնելու հետ լեռը կրկին փոքրանում է: Դրանից հետո հովիվն իր երեխաների հետ կրկին բնակություն է հաստատում նույն տարածքում:

Չիլիի արաուկանների տոհմը ավանդազրույց էր պահպանել այն մասին, որ ժամանակներ առաջ ջրհեղեղ է եղել, որից փրկվել են միայն սակավաթիվ հնդկացիներ: Նրանք բարձրացել են Թեթեգ («դղրդացող») կամ «փայլատակող» լեռը, որը երեք գագաթ ուներ եւ կարող էր լողալ ջրում:

Շարունակելի

«Ձեր խոսքը, ընկե՛ր Մաուզեր»

Մինչեւ 1905 թ. առաջին հեղափոխությունը Ռուսական կայսրության զենքի վաճառքով մասնագիտացված խանութների ցուցափեղկներում եւ թերթերում կարելի էր կարդալ գովազդ՝ «Ռեուլվեր» 50 փամփուշտով: Միայն 2 ռուբլի: Ինքնապաշտպանության համար անվտանգ եւ հուսալի զենք՝ վախեցնելու եւ տագնապ բարձրացնելու համար: Լիովին փոխարինում է թանկարժեք ու վտանգավոր ռեուլվերներին: Դիպուկ է: Անհրաժեշտ է ամեն մեկին, եւ կրելու համար թույլտվություն պետք չէ: 50 լրացուցիչ փամփուշտներն արժեն 75 կոպեկ, 100 հատը՝ 1 ռուբլի 40 կոպեկ, փոստով առաքելու համար լրացուցիչ վճարել 35 կոպեկ»:



Մինչեւ 20-րդ դարի սկիզբը Ռուսական կայսրությունում եւ եվրոպական շատ երկրներում ազատ կարելի էր ձեռք բերել հրազեն: Ձեռքը գնում էին հիմնականում արտոնյալ դասի ներկայացուցիչները, սակայն գյուղերում զենք ձեռք բերելը չէր վերահսկվում: Գյուղացին կարող էր գնել որսորդական երկփողանի հրացան, եթե միջոցները ներեին:

Երկար ժամանակ Ռուսական կայսրությունում եւ այլ երկրներում գոյություն չուներ զենք գնելը եւ կրելը սահմանափակող օրենքներ: Կյանքի պայմանները դաժան էին, եւ շատերը իրենց կյանքն ու գույքը պաշտպանելու համար գնում էին տարբեր զինատեսակներ: Գյուղերում բնակիչներին սպառնում էին զիջատիչ գազանները եւ ավազակները, երկարատես ճանապարհորդություն նախաձեռնողներն աշխատում էին անվտանգության համար ունենալ զենք, հիմնականում՝ ատրճանակ: Համեմատաբար լավ էին զինված Հյուսիսային Կովկասում, Միջին Ասիայում, Միջրբում, Ուրալում եւ Հեռավոր Արեւելքում: Ձեռքի գնելը բարձր չէին. «Պարաբել-

լում» ատրճանակի արժեքը տատանվում էր 40-ից 60, «Բրաունինգհերն»՝ 20-ից 60, «Մաուզերին»՝ 40-ից 50 ռուբլու սահմաններում: Միջին արժեքի թմբուկավոր ատրճանակը հավասարազոր էր բուժակի մեկ ամսվա կամ վարժարանի ուսուցչի կես ամսվա աշխատավարձին: Այս համեմա-

տությունն արվում էր կայսրության եվրոպական մասի հետ: Արեւելյան Հայաստանի հայ գյուղացու տարեկան եկամուտը հավասարազոր էր 60 ռուբլու: Կային ավելի էժան ատրճանակներ, օրինակ՝ միալիցքը, որն արժեք էր 1,5 ռուբլի: Այդ տարիներին Ռուսաստանում լայն տարածում են գտնում, այսպես կոչված «կանացի» ատրճանակները, որոնք կարելի էր պահել պայտասկում: Այդ ատրճանակները հայտնի էին «վելոդոգ» անունով եւ շատ տարածված էին հեծանվորդների շրջանում՝ փողոցային շենքից պաշտպանվելու համար:

1905 թ. հեղափոխության ժամանակ, երբ ապստամբ ժողովուրդը սկսեց օգտագործել տարատեսակ զենք, պետությունը սահմանափակումներ մտցրեց՝ հրազեն կարող են ունենալ ոստիկանության հատուկ թույլտվությամբ: Արգելվեց ունենալ բանակային հրազեն՝ պահուստակավոր եւ ակոսավոր հրացաններ ու կարաբիններ:

Արգելք տարածվում էր նույնիսկ բարձրաստիճան անձանց վրա:

Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո խորհրդային կառավարությունը հատուկ դեկրետով սահմանեց, թե ովքեր իրավունք ունեին զենք կրելու: Հրամանագիրը խախտողը կարող էր դատապարտվել մինչեւ 10 տարվա բանտարկության: Ձեռք կրելու իրավունք ունեին միայն բոլշեվիկյան կուսակցության անդամները: Յուրաքանչյուր անձին թույլատրվում էր ունենալ 1 հրացան եւ 1 ատրճանակ, իսկ անկուսակցական քաղաքացիները պարտավոր էին հանձնել իրենց զենքն ու զինամթերքը:

Հայաստանի Հանրապետությունում նման օրենքների օգնությամբ փորձում էին կարգավորել զենքի եւ զինամթերքի հետ կապված հիմնախնդիրը: 1919 թ. հուլիսի 24-ին կառավարությունը օրենք է ընդունում զինահավաքի մասին: Քաղաքացիները պարտավոր էին եռօրյա ժամկետում հանձնել «Մոսին» եւ «Լեբել» մակնիշի մարտական հրացանները եւ փամփուշտները: Առաջարկվում էր փոխհատուցում՝ հրացանի մեկ միավորի համար 500 ռուբլի, իսկ մեկ փամփուշտի համար՝ 50 կոպեկ: Ձեռքարկվողները կարող էին բանտարկվել 3 ամսով կամ տուգանվել 30 հազար ռուբլով:

1924 թ. դեկտեմբերին ԽՍՀՄ-ում ընդունված օրենքի համաձայն՝ քաղաքացին կարող էր ունենալ միայն ողորկափող հրացան: 1953-1955 թթ. Իոսիֆ Ստալինի մահից հետո արվեցին որոշ մեղմացումներ՝ ողորկափող հրացան գնելու համար պարտադիր չէր լինել որսորդական միության անդամ, բայց հետագայում վերադարձան նախկին կանոններին, որոնք որոշ բացառությամբ գործում են առ այսօր:

Պատրաստեց Ռուբեն ՍԱՅՎԱԿՅԱՆԸ

... եւ պատիժ

Չէր ուզում սպանել



պարտք մնացած փողը վճարել հոկտեմբերի 20-ին: Հոկտեմբերի 19-ին իրեն զանգել է Լեւոնն ու պնդել, որ հանդիպեն:

Վահանը նշել է, որ այդ պահին իր մոտ միայն 20

Վահան Ղազարյանի դեկավարած հեռուստաստուդիայում 2016 թվականի փետրվարից որպես լրագրող աշխատանքի էր ընդունվել Արեգակազան Թ-ն:

Օգոստոսին նա Վահան Ղազարյանի հետ ֆինանսական խնդիրներ է ունեցել՝ կապված աշխատավարձի չվճարման հետ, ու ազատվել է աշխատանքից: Նրա նշանածը՝ 22-ամյա ատամնաբույժ Լեւոն Սահակյանը, չվճարված 100 հազար դրամը ստանալու նպատակով մի քանի անգամ հեռախոսազրույց է ունեցել Վահան Ղազարյանի հետ: Նա պարտավորվել էր վճարել 2016 թ. հոկտեմբերի 20-ին:

Հոկտեմբերի 19-ին հեռուստաստուդիայի տնօրենի աշխատասենյակում Լեւոնը հանդիպել է Վահանին: Նրանք վիճել են, որի ժամանակ Վահան Ղազարյանը դանակով երկու հարված է հասցրել Լեւոնի ոտքի ու կրծքավանդակի շրջաններին: Լեւոնը կարողացել է դեպքի վայրում գտնվող ընկերոջ հետ իր մեքենանով հասնել մոտակա հիվանդանոց: Երիտասարդի կյանքը փրկել են հարավոր չի եղել...

Վահան Ղազարյանին մեղադրանք է առաջադրվել դիտավորյալ սպանության համար: Նա իրեն մեղավոր չի ճանաչել՝ հայտարարելով, թե տուժողին սպանելու դիտավորություն չի ունեցել: Ըստ ամբաստանյալի՝ չի կարողացել վճարել Արեգակազանի աշխատավարձի մի մասը՝ 80-90 հազար դրամի չափով: Ինքը նրա նշանածին խոստացել է

հազար դրամ կար եւ առաջարկելու էր, որ այդ գումարը տա, իսկ մնացածը վճարի առաջիկա երկուշաբթի:

Լեւոնը հեռուստաընկերություն է գնացել ընկերոջ՝ Արտակի հետ:

Վահանի աշխատասենյակում է տեղի ունեցել հանդիպումը: Ըստ Վահանի՝ երբ ինքն ասել է, թե այդ պահին աշխատավարձի ամբողջ պարտքը վճարել չի կարող, իր ու Լեւոնի միջեւ ընդհարում է եղել, նույնիսկ դրան ապակին է ջարդվել: Լեւոնը պահանջել է վճարել ամբողջ պարտքը: Նա գնացել է այն սեղանի մոտ, որի վրա լուսանկարչական ապարատներ էին դրված, վերցրել է ամենաթանկն ու ասել, թե կվերադարձնի, երբ նա վճարի Արեգակազանին չվճարված ամբողջ գումարը: Ըստ Վահանի՝ այդ ապարատն իրեն չէր պատկանում, ինքը խնդրել է, որ Լեւոնը ապարատը տեղը դնի: Ըստ Վահանի ցուցմունքի՝ Լեւոնը խփել է, ինքն ընկել է: Լեւոնը շարունակել է խփել, ինքը գրպանից հանել է դանակն ու խփել է ոտքին:

Կրծքավանդակին խփելու պահի մասին ասել է՝ «Ոնց եմ կրծքին խփել, չեմ զգացել, նպատակ չի եղել կյանքը խլել...»:

Երեւանի ընդհանուր իրավասության դատարանը Վահան Ղազարյանին մեղավոր ճանաչեց դիտավորյալ սպանության համար: Նա դատապարտվեց 11 տարի 6 ամիս ազատազրկման:

Գոհար ԶԱԼԱԾՅԱՆ

Գողություն մեքենայից

Դեկտեմբերի 31-ին ոստիկանության Կենտրոնական բաժնում մի քաղաքացուի հաղորդում էր փոխել, որ Խորենացու փողոցում կայանված իր մեքենայից գողացել են պայուսակը, որի մեջ եղել են փող, բանկային քարտեր ու փաստաթղթեր: Գողն օգտվել էր մեքենայի դռները բաց լինելու հանգամանքից:



Մարտի 13-ին Թումանյանի ընկալական բաժնից գրություն էր ստացվել, որ քրեական գործի նախաքննության ընթացքում կատարված մասնագիտական ստուգման ժամանակ «Դսեղի անտառտնտեսության» մասնաճյուղի կողմից անտառխախտման արձանագրությամբ արձանագրված ծառերի կոճերը գնելու ընթացքում հայտնաբերվել են ապօրինի հատված բալենու, հացենու, հաճարենու եւ բոխու կոճեր:

Պատճառված վնասը 310.500 դրամի էր: Օպերատիվ-հետախուզական

Ոստիկանության Կենտրոնական բաժնի ծառայողներին չհաջողվեց հանցագործությունը բացահայտել «վրաք հեղուկով»: Բայց բացահայտման աշխատանքները չդադարեցին: Դեպքից ամիսներ անց հանցագործությունը բացահայտվեց: Ոստիկանության

Կատարվում է քննություն: Ն. Ս.

Շիրակի մարզի բնակիչ Սուրեն Մինասյանը «հուզական» բնավորության պատճառով հայտնվել է քրեական պատասխանատվության ենթարկվելու փաստի առաջ:

Քրեական օրենսգրքի 113 (դիտավորյալ սպանություն) միջին ծանրության վնաս պատճառելը, 183 (տրանսպորտային միջոցին ապօրինաբար տիրանալն առանց հափշտակելու նպատակի) եւ 185 (գույքը դիտավորյալ սպանության նպատակով վնասելը) հոդվածները «շալակած» 52-ամյա տղամարդն ի սկզբանե ինքնադրսետրվեց մեքենա վարելու բուռն ցանկության պատճառով:

Մարզկենտրոնից իրենց գյուղ էր գնալու, երբ բեռազրկայանի մոտ նկատեց համագյուղացու մեքենան: Մեքենայատերն էլ ճանապարհի մյուս կողմում ինչ-որ մեկի հետ զրուցում էր: Բախտը բերեց. նրա մեքենայով էլ կհասներ գյուղ: Բայց ամեն ինչ խառնվեց, երբ Լեւոնը, որ մեքենայի բանալին շարժիչի գործարկման փակակնի վրա է: Չհաղթահարեց ցանկությունը. նստեց դեկի մոտ, ու մեքենան արկվեց տեղից...

Մեքենա վարելու բուռն ցանկությունը բավարարված էր, բայց ճանապարհին մեքենան խփվեց բետոնե արգելապատնեչին, ու

առանց մեքենա երկար էր մնալու: Սուրեն Մինասյանն այդ ընթացքում «հուզական» մեկ այլ պատմության մեջ ընկավ:

Նարեանի հորթը մտել էր իր հողամասն ու «հանգիստ խղճով» արածում էր: Գրպանից հանեց դանակն ու նետեց կենդանու ուղղությամբ: Դանակը հասավ նշանակետին: Նորթն ընկավ, իսկ Սուրենը վերջին հարվածը հասցրեց «խմ» ու «քոն» չտարբերող անասունին՝ գլխատեց:

«Նուզական» պատմությունը նոր շարունակություն ունեցավ: «Պատժված» հորթի տերը նախատեց նրան արարքի համար, Սուրենն էլ, կրկին հուզվելով, նույն դանակով հարվածեց հարեւանին՝ հորթին տիրություն չանելու եւ իր հողամաս «ուղարկելու» համար:

Ութին վնասվածք ստացած հարեւանը տեղափոխվեց հիվանդանոց, իսկ Սուրենը՝ ոստիկանություն, որտեղ էլ ի մի բերվեցին նրա վերջին երկու օրերի «հուզական» դրսեւորումները:

Նարուցվել է քրեական գործ: Նամիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Մշտապես հուզվածք



խափանվեց: Նեց այդտեղ էլ թողեց ու պատահական փոխադրականով գնաց իրենց գյուղ:

Մեքենայատերը, չիմանալով էլ մեքենան առեւանգել, դիմեց ոստիկանություն:

Մեքենան հայտնաբերվեց: Պարզվեց նաեւ փախցնողի ինքնությունը: Պատճառված վնասը ութսուն հազար դրամի էր: Մեքենայատերը չբողբեց, անսարքությունն էլ վերացրեց սեփական ծախսերով. Սուրենին սպասեր՝

Բացահայտում են Ստեփանավանի ոստիկանները

Մարտի լույս 26-ի գիշերը ոստիկանության Ստեփանավանի բաժնի ահազանգ ստացվեց: Հայաստանում գործող բջջային օպերատորներից մեկի անվտանգության աշխատակիցը հայտնեց, որ ընկերության Ստեփանավանի մասնաճյուղի ծայրագագան-շանային համակարգը միացել է: Ստեփանավանի արագ արձանագանքած Ստեփանավանի ոստիկանները տեղում պարզեցին, որ սպասարկման սրահի դուռը տեխնիկական միջոցների գործարկմամբ բացվել են ու գողացել տարբեր տեսակի 14 բջջային հեռախոս՝ ընկերությանը պատճառելով շուրջ 1 միլիոն 200 հազար դրամի վնաս:

րեւորը՝ հանցագործությունը կատարելու մեջ կասկածվող անձի ինքնությունը:

Ոստիկանների տեսադաշտում



հայտնված տղամարդը Երեւանում ապրող Արտակ Այվազյանն էր: Քրեական հետախույզները օպերատիվ ճանապարհով պարզեցին, որ նա դեպքից հետո վերադարձել է մայրաքաղաք, ապա 10-ամյա որդու հետ շարժվել Բագրատաշենի սահմանային անցակետի ուղղությամբ: Ստեփանավանի ոստիկանները

կապվեցին Նոյեմբերյանի գործընկերների հետ՝ հայտնելով կողմնորոշումներ: Համատեղ աշխատանքի արդյունքում քրեական հետախույզները Արտակ Այվազյանին հայտնաբերեցին Բագրատաշենի սահմանային անցակետի մոտակայքում: Նա կասկածանքով բերման ենթարկվեց, իսկ անչափահաս որդին մերկայացվեց ոստիկանության Ստեփանավանի բաժնի: Նրանց խուզարկություններով հայտնաբերվեցին տասից ավելի բջջային հեռախոսներ, որոնց մի մասը բերման ենթարկվածի որդու մոտ էր: Հեռախոսների մուլտիմեդիայային համարներն ու տեսակները համընկան ընկերությունից գողացվածների համարների հետ:

Ոստիկանության Ստեփանավանի բաժնում գողության հատկանիշներով հարուցված քրեական գործը ուղարկվել է Լոռու մարզային քննչական վարչություն:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Վայրիկի ծառահատումներ

Մարտի 13-ին Թումանյանի ընկալական բաժնից գրություն էր ստացվել, որ քրեական գործի նախաքննության ընթացքում կատարված մասնագիտական ստուգման ժամանակ «Դսեղի անտառտնտեսության» մասնաճյուղի կողմից անտառխախտման արձանագրությամբ արձանագրված ծառերի կոճերը գնելու ընթացքում հայտնաբերվել են ապօրինի հատված բալենու, հացենու, հաճարենու եւ բոխու կոճեր:



միջոցառումների շնորհիվ պարզվեց, որ 2018 թ. դեկտեմբերից 2019 թ. հունվար «Հայաստան» ՊՈԱԿ «Դսեղի անտառտնտեսության» մասնաճյուղի «Լեւոն» հանդամատում Լեւոն Ղ-ն բեռազատողով ապօրինի հատել է բալենի եւ բոխի ծառեր, տեղափոխել Դսեղ գյուղի իր տուն եւ օգտա-

գործել որպես վառելիքայտ: Լեւոն Ղ-ն ներկայացվել է Ռուսաստանի ընկալական բաժնի:

Մարտի 22-ին բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնից գրություն էր ստացվել, որ Երեւանի Յան Ռայնիսի փողոցի 13 շենքի բակում հայտնաբերվել է թթնու կոճ: Վնասը՝ 465 հազար դրամի:

Ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնի ծառայողները պարզեցին, որ ծառահատումը կատարել է Կարեն Ա.-ն, որը մարտի 23-ին ներկայացվել է բաժնի եւ տվել խոստովանական բացատրություն:

Կատարվում է քննություն: Նարեկ ՍԱՐԳՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնական դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Պոզեկան խանգարումով տառապող անծի բուժումը կատարվում է նրա կամ նրա օրինակական ներկայացուցչի գրավոր դիմումի հիման վրա. սա օրենքի պահանջն է: Օրենքը նաև սահմանում է՝ հոգեկան խանգարումներով տառապող անծը կարող է հարկադիր հոսպիտալացվել հոգեբուժական հանձնաժողովի եզրակացության հիման վրա: Այսինքն, եթե չկա դիմում, իսկ հոգեկան խանգարում ունեցողը հարազատների և շրջապատի համար համարվում է պոտենցիալ սպառնալիք: Բայց հոգեբուժական հանձնաժողովի՝ հարկադիր բուժման եզրակացությունը սովորաբար լինում է, եթե հոգեկան խանգարում ունեցողի կողմից կատարված հանցագործությունն այլևս փաստ է: Այստեղից հետևություն՝ հոգեկան խանգարում ունեցողի կողմից կատարվող հանցագործությունները կանխելու մեխանիզմ չկա: Միակ հույսը այդ մարդկանց հարազատների իրավագիտակցությունն է. նրանք պետք է միշտ հիշեն, որ վարքի խանգարումները կարող են արտահայտվել նաև անսպասելի, չպատճառաբանված ագրեսիայով՝ դառնալով հանցագործության, երբեմն նաև անշքելի ողբերգության պատճառ...

Դեռևս երկու տարի առաջ էր Տավուշի մարզի բնակիչ Յակոբ Մնացականյանը հաշվառվել նյարդահոգեբուժական դիսպանսերում, սակայն շարունակում էր ապրել եղբոր՝ Ստեփանի հետ: Նրա անսպասելի ագրեսիայի թիրախը, սակայն, եղբայրը չեղավ: Հարեան Ներսիկ Սանոսյանը հաճախ էր այցելում նրան, Յակոբին խնամելու հարցում էլ երբեմն օգնում էր Ստեփանին: Այդ օրը, սովորականի պես, այցելեց եղբայրներին: Ստեփանին օգնելու անհրաժեշտություն կար: Վերջին օրերին Յակոբի վարքը տարօրինակ էր, եւ Ստեփանը որոշել էր խորհրդակցել բժիշկների հետ: Ստեփանի՝ եղբոր մոտ մնալու խնդրանքը

Ներսիկը չմերժեց՝ առաջին անգամ չէր: Այդ օրը, սակայն, այլ էր: Հակորը հիվանդագին վիճակում էր, անգոր՝ գիտակցելու իր գործողությունները:

Ինչ-որ պահի Ներսիկի եւ Հակորի «ջրերը մի առվով չեն գնում»: Ներսիկը ապարդյուն ջանք է թափում խաղաղեցնելու նրան: Բայց մասնագետ չէր, նման հոգեվիճակում

Անկանխատեսելի՝ ազնայա



գտնվողի հետ ճիշտ վարվելուն չէր տիրապետում: Վիճում են: Հակորը սեղանից անսպասելի վերցնում է դանակն ու խփում Ներսիկին...

Բարեբախտաբար արմուկը լսում է նույն հարկի հարեւանուհին ու վիճողներին ու վիճելը պարզելու համար դուրս է գալիս միջանցք: Չայնը Ստեփանեմեց տնից էր, դուռն էլ բաց էր: Հարեւանուհին կարողանում է խլել դանակը՝ կանխելով հաջորդ հարվածները:

Հանցագործությունը փաստ էր, ուստի հոգեբուժական հանձնաժողովի կողմից հարկադիր բուժման որոշում է կատարվում:

Հաջորդ դեպքը Գյումրիում է կատարվել: Հունվարի 31-ի գիշերային հերթափոխի ժամանակ գազալցակայաններից մեկի աշխատակիցը հյուրեր ուներ: Ստերիմ մարդիկ էին Սասուն Սահակյանն ու Վրեժ Սարգսյանը: Ջրուցում են, սուրճ խմում: Հետո Վրեժը գարեջուր խմելու ցանկություն է հայտնում: Սասունին առաջարկում է իր համար գարեջուր գնել: Մերժում ստանալով՝ սկսում է գոռոզալ, վիճել: Նրան

հանգստացնում են: Տաս-տասնհինգ րոպե անց, առանց որեւէ խոսք ասելու, դուրս է գալիս: Մեկ-երկու րոպեից վերադառնում է, թիկունքից մոտենալով բազմոցին նստած Սասունին՝ երկաթի կտորով խփում է գլխին ու փախչում...

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվում է, որ Վրեժ Սարգսյանը տառապում է շիզոֆրենիայով:

Այդ օրը ագրեսիվ էր. վիճել էր տնեցիների հետ, հետո դուրս էր եկել տնից ու պատահաբար հանդիպել Սասուն Սահակյանին: Նրա առաջարկությամբ էլ գնացել էր գազալցակայանում աշխատող իրենց ընկերոջ մոտ՝ ժամանակ անցկացնելու: Փաստորեն, պատրաստ էր վտանգավոր արարքի, պարզապես նրա ճանապարհին Սասուն Սահակյանը հայտնվեց:

Վրեժ Սարգսյանի նկատմամբ նույնպես հարկադիր բուժման որոշում է կայացվել:

Արարատի մարզի բնակիչ Մարիամ Մինասյանի արարքը, առաջին երկուսի համեմատ, անմեղ է. գողություն է արել: Սակայն հոգեբուժական կլինիկայում գտնվելը նրա պարագայում նույնպես անհրաժեշտ է, որովհետեւ միշտ կոնֆլիկտների մեջ է ընտանիքի անդամների ու հարեւանների հետ: Ժամանակ առ ժամանակ փախչում է տնից, թափառում դաշտերում, ձորերում, ուր խելքին փչի:

Հերթական վեճից հետո հերթական փախուստը նրան Կոտայքի մարզ էր հասցրել: Ուշ երեկոյան հայտնվել էր Արմավիրում: Եվ սոված էր, եւ հոգեկան անհավասարակշիռ վիճակում: Առաջնահերթը սովածության հարցը լուծելն էր: Ստունում է տներից մեկի նկուղն ու հեռանում պահածոներով ու հագուստով հանդերձ: Կուշտ ուտում է, գողացած հագուստը թաքցնում քարի տակ ու մեկ այլ նկուղից կենցաղային իրեր գողանում:

Մարիամի գիշերային «գործունեությունը» ժամեր անց բացահայտվեց: Նյութերի նախապատրաստման ընթացքում նաև հոգեբուժական փորձաքննություն նշանակվեց: Պարզվեց, որ նա հիվանդագին խանգարված հոգեվիճակում է:

Այս դեպքում էլ հոգեբուժական հանձնաժողովի որոշումը հարկադիր բուժումն էր: **Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ**



Գողություններ մերենաներից

Մարտի 17-ին օպերատիվ կառավարման կենտրոնից ոստիկանության Կոտայքի բաժնում հաղորդում ստացվեց. Արմավիր քաղաքի Հանրապետության փողոցի մի բնակիչ 1-02 էր զանգել ու հայտնել, որ բակում կայանված իր մեքենայից գողություն է կատարվել: Ահազանգով դեպքի վայր մեկնած ոստիկանները պարզեցին, որ գողացել էին «Ֆորդ Տրանզիտ» մակնիշի մեքենայի կողային հայելին:

Քրեական հետախույզները գողությունը կատարած անձին եւ գողը հայտնաբերելու ուղղությամբ միջոցառումներ էին ձեռնարկում, երբ Նոր ահազանգ ստացվեց: Այս անգամ Արմավիրի 4-րդ միկրոշրջանի շենքերից մեկի բակում կայանված «Մերսեդես»-ի հայելին էին հափշտակել:

Ձեռք բերված տվյալների եւ ստացված տեղեկությունների համադրությամբ պարզվեց, որ գողությունները հնարավոր է կատարած լինի Արմավիրի Հանրապետության փողոցի բնակիչ Երիբեկ Քառյանը:

Նա բերման ենթարկվեց ոստիկանության Կոտայքի բաժնի եւ տվեց խոստովանական բացատրություն: **Քննությունը շարունակվում է:**



«Գրի ճամփա»

Մարտի 22-ին ոստիկանություն գանգած քաղաքացուին հայտնում էր, որ Վանաձորի Գրիգոր Լուսավորչի փողոցի դեղաբանից գողացել են իր դրամապանակը: Դեպքի վայրում վաճառողուին ոստիկաններին հայտնեց, որ որպես հաճախորդ

դեղաբան մրամ փղամարդը սեղանի վրայից գողացել էր դրամապանակը, որի մեջ եղել են բանկային քարտեր ու փող:

Ոստիկանության Տարնի բաժնի ծառայողները ձեռնարկեցին անհրաժեշտ միջոցառումներ հանցագործությունը «բաց հետքերով» բացահայտելու ուղղությամբ: Քիչ անց կասկածյալը վանաձորցի Արա Արթենյանը, հրավիրվեց ոստիկանություն եւ խոստովանեց կատարածը: Անձնական խուզարկությամբ նրա մոտից հայտնաբերվեց կանացի դրամապանակը:

Փաստի առթիվ ոստիկանության Տարնի բաժնում հարուցվեց քրեական գործ: Արա Արթենյանը ստորագրությամբ բաց թողնվեց: **Նարեկ ՄԱՐԳՍՅԱՆ**

Բացահայտում են Մեղրիի ոստիկանները

Ոստիկանության Մեղրիի բաժնում ապօրինի թմրաշրջանառության վերաբերյալ օպերատիվ տվյալներ էին ստացվել, որոնք իրացվեցին ոստիկանության ԿՀԳՊ գլխավոր վարչության եւ ՌԳ սահմանապահ գործերի Մեղրիի գործառնա ծառայողների համատեղ ուժերով: Մեղրիի սահմանային անցակետի չեզոք գոտում գնմվեց Իրանի քաղաքացի Ղասեմ Նադիրի «Հունդայի» մակնիշի մեքենան: Հայտնաբերվեց հոգեմեղման ծուն ութ դեղահաբ: Իրավապահները գնեցին նաև ԻԻՀ քաղաքացի Էսմայիլ Ռահազոգարի «Պեժո» մակնիշի ավտոմեքենան: Հայտնաբերվեց հոգեմեղման ծուն դեղահաբ: Չնկատելի մեքենան հայտնաբերվեց Կարողի նստելատեղի մոտ հայտնաբերվեցին հոգեմեղման ծուն մեկ դեղահաբ եւ պոլիէթիլենային փաթեթներ՝ ափիոնաման գանգվածներով: Մեքենաները տեղափոխվել են ոստիկանության Մեղրիի բաժնի պահպանվող հատուկ տարածք: Հանգամանքները պարզվում են: Կատարվում է քննություն: **Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ**

«Կանեխաղթել»

Առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության հատկանիշներով ոստիկանության Անիի բաժնում հարուցված քրեական գործի շրջանակներում քրեական հետախույզները խուզարկություն կատարեցին Շիրակի մարզի Չորակապ գյուղի բնակիչ Վանուշ Կիրակոսյանի տանը: Ննջարանում եւ տանիքում հայտնաբերվեցին պոլիէթիլենային տոպրակներով դեղնակապակով գանգվածներ՝ ընդհանուր 390 գրամից ավելի քաշով: Հայտնաբերվեցին նաև կանեփի սերմեր՝ 30 գրամից ավելի քաշով: 31-ամյա տանտիրոջ հայտնածով՝ հայտնաբերվածը կանեփ է եւ իր օգտագործման համար: Հանգամանքները պարզվում են: **Հանգամանքները պարզվում են:**



«Բաց դրեքի օր»

Փետրվարի 15-ին օպերատիվ կառավարման կենտրոնից ոստիկանության Զարբախի բաժնում ստացվեց, որ Նոր Խարբերդի տներից մեկից գողություն է կատարվել: Օգտվելով դուռը կողպված չլինելու հանգամանքից՝ մտել էին տուն, հափշտակել ինչ ձեռքներն ընկել էր:

Իրավապահները միջոցներ էին ձեռնարկում գաղտնի հափշտակությունը կատարած անձի ինքնությունը պարզելու եւ հայտնաբերելու ուղղությամբ, երբ փետրվարի 26-ին գողության մասին բաժնում ստացվեց նոր ահազանգ ստացվեց. Մարկվարտի փողոցի մի տնից, որի դուռը դարձյալ կողպված չէր եղել, բջջային հեռախոս էին գողացել:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ոստիկանության Զարբախի բաժնի ծառայողները տեղեկություններ ստացան, որ գողությունները հնարավոր է կատարած լինի Նոր Արեշի բնակիչ Արման Ամիրյանը:

Տեղեկությունները հավաստի էին. մարտի 24-ին կասկածյալը բերման ենթարկվեց ոստիկանության Շենգավիթի բաժնի:

Կատարվում է քննություն **Գոռ ՎԱՆՅԱՆ**

«02»-ի օպերատիվ իրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնական դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

